2025-2026 ՈՒՍՏԱՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՓՈՒԼԻ ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ
10 - ՐԴ ԴԱՍԱՐԱՆ - Տևողությունը՝ 90 րոպե
Ընտրովի պատասխաններով առաջադրանքներ

1.Որքա՞ն է ՊԿ (ԿԳ) գնդացրից, մինչև փողի փոխելը, անընդմեջ կրակ վարելու առավելագույն քանակը։
1. Մինչև 800 կրակոց 2. Մինչև 500 կրակոց 3. Մինչև 250 կրակոց 4. Մինչև 550 կրակոց

2. Նշվածներից ո՞րը ականապայթյունային արգելափակոց չէ։
1.Ականադաշտերը 2.Ականախմբերը
3.Պայթեցման նախապատրաստված օբյեկտները 4.Էսկարպները

3.Առօրյա կյանքում հույզ ասելով հասկանում ենք.
1.Անձի տարաբնույթ ռեակցիաները։ 2.Անհատի էմոցիաները։
3.Անձի կամային վիճակները։ 4.Անձի ապրումները։

4. Ո՞րն էր Դավիթ Բեկի նստավայրը։
1. Շինուհայր ավանը 2. Տաթևի վանքը 3. Հալիձորի բերդը 4. Շուշիի բերդը

5. Ինչի՞ շնորհիվ էր Սյունիքի փոքրաքանակ զորքը կարողանում հաղթել թշնամուն։
1. Զենքերի քանակի շնորհիվ։
2. Բերդերի բարձրության շնորհիվ։
3. Անսպասելի հարձակումների և տեղանքի լավ իմացության շնորհիվ։
4. Թշնամու ներքին խռովությունների շնորհիվ։

6. Քանի՞ հեծյալ և հետևակ կարող էին դուրս բերել Արցախի սղնախները պատերազմի ժամանակ։
1. 10 հազար հեծյալ և 15 հազար հետևակ 2. 25 հազար հեծյալ և 25 հազար հետևակ
3. 30 հազար հեծյալ և 20 հազար հետևակ 4. 40 հազար հեծյալ և 10 հազար հետևակ

7. Ի՞նչ է ձգաբանությունը (բալիստիկան)։
1. Գիտություն գնդակի շարժման մասին։
2. Գիտություն գազերի ճնշման հետևանքով գնդակի թռիչքի մասին։
3.Գիտություն հրազենային գնդակների, հրետանային արկերի, ավիառումբերի, նռնակների՝ որպես ազատ նետված մարմինների շարժման մասին։
4. Գիտություն հրազենային գնդակների, հրետանային արկերի, ավիառումբերի, նռնակների՝ որպես նետված մարմինների շարժման մասին։

8. Ինչպե՞ս է զինծառայողը կատարում ողջույնը պետին (ավագին) հանդիպելիս, եթե նրա ձեռքերը զբաղված են։
1. Պետք է դադարեցնի քայլելը և կողքով շրջվի պետի կողմը։
2. Պետք է արագ ազատի ձեռքերը և ձեռքով ողջունի։
3. Պետք է շրջվի դեմքով դեպի պետը։
4. Միայն գլխով ողջունում է՝ շրջելով գլուխը պետի (ավագի) կողմը։

9. Ո՞րն է դիրեկցիոն անկյունը։
1.Տեղագրական քարտեզի կոորդինատային ցանցի ուղղահայաց գծի հյուսիսային ուղղության և դեպի տեղանքի առարկան (նպատակակետը) տարված ուղղի միջև ընկած անկյունը։
2.Գնդակի թռիչքի հետագծի և հորիզոնի միջև ընկած անկյունը։
3.Թիրախի, զենիթի և հորիզոնի միջև ընկած անկյունը։
4.Տեղագրական քարտեզի կոորդինատային ցանցի հորիզոնական գծի արևելյան ուղղության և դեպի տեղանքի առարկան (նպատակակետը) տարված ուղղի միջև ընկած անկյունը։

10.Ինչո՞ւ չի կարելի ինքնուրույն հանել վերքի մեջ մխրճված օտար մարմինը։
1. Կխորանա վերքը։ 2. Կառաջանա արյան վարակ։
3. Կառաջանա ուժգին արյունահոսություն։ 4. Կառաջանա բարձր ջերմություն։

11. Համապատասխանեցրու՛ և նշի՛ր ճիշտ պատասխանը:

1. Հարվածային ալիքի դեպքում — ա. Մարդը կարող է պաշտպանվել ապաստարաններում և հակաճառագայթային թաքստոցներում, իսկ մասնակիորեն՝ բաց և հատկապես ծածկված ճեղքերում:
2. Լուսային ճառագայթում — բ. Պաշտպանվում են տեղանքի ծալքեր, ապաստարաններ, նկուղներ, և այլ ամուր կառուցվածքներում
3. Ներթափանցող ճառագայթում — գ.Վարակի առաջին օրերին կարող են պատսպարվել համապատասխան պաշտպանական կառույցներում:
4. Ռադիոակտիվ վարակում — դ. Կարելի է պաշտպանվել ստվեր առաջացնող ցանկացած արգելքի միջոցով:

1.1- բ,2-դ, 3-գ, 4-ա
2.1-բ, 2-դ,3-ա, 4-գ
3.1-բ, 2-ա,3-գ, 4-դ
4.1-գ, 2-բ, 3-ա,4-դ

12. Համապատասխանեցրու՛ և նշի՛ր ճիշտ պատասխանը:

1. Զորատեսակ — ա. Սեփական ցանկությամբ զինվորական ծառայության անցած անձ:
2. Զորամիավորում — բ. Զինված ուժերի համակարգում ինքնուրույն գործող մարտավարական և վարչատնտեսական միավոր:
3. Զորամաս — գ. Տարբեր զորատեսակների ստորաբաժանումների միավորում:
4. Կամավորական — դ. Պետության զինված ուժերի տեսակ, որը նախատեսված է որոշակի աշխարհագրական տարածքում հատուկ ռազմական գործողություններ կատարելու համար:

1. 1-դ, 2- գ, 3-բ, 4-ա
2. 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3. 1-ա ,2-բ, 3-գ, 4-դ
4. 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ

13. Համապատասխանեցրու՛ և նշի՛ր ճիշտ պատասխանը:

1. Պահեստատուփի զսպանակ — ա.
2. Հետադարձ զսպանակ — բ.
3. Փողակալ — գ.
4. Գազախուց — դ.

1. 1-բ, 2 -գ, 3-դ, 4-ա
2. 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
3. 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա
4. 1-ա, 2-դ, 3-բ, 4-գ

14.Համապատասխանեցրու՛ և նշի՛ր ճիշտ պատասխանը:

1.ՀՀ պետական օրհներգի խոսքի և երաժշտության հեղինակները — ա. Ռուբեն Արուտչյան և Գագիկ Աբրահամյան
2.Պետական զինանշանի հեղինակները — բ. Միքայել Նալբանդյան և Բարսեղ Կանանչյան
3.ՀՀ ԶՈՒ զինանշանի հեղինակները — գ. Աղասի Այվազյան և Ռոբերտ Ամիրխանյան
4. Բանակի երգի խոսքի և երաժշտության հեղինակները — դ. Ալ.Թամանյան և Հակոբ Կոջոյան

1.1-ա, 2-դ, 3-բ, 4-գ
2.1-բ, 2-դ, 3-ա, 4-գ.
3.1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
4.1-գ, 2-ա, 3-բ, 4-դ

15.Առարկայի մագնիսական ազիմուտը հավասար է խոտորման անկյան 25 % - ին: Քանի՞ աստիճան է առարկայի մագնիսական ազիմուտը, եթե նրա գեոդեզիական (իրական) ազիմուտը 80^0 է:

1.25^0 2.16^0 3.49^0 4.360^0

Կարճ պատասխաններով առաջադրանքներ

16.Քանի՞ անգամ է քլորը ծանր օդից: Պատասխանը բազմապատկել 10-ով:

17.Քանի՞ արկից է բաղկացած ՀՄՄ 1-ի վրա տեղադրված 73 մմ տրամաչափի հարթափող թնդանոթի մարտական լրակազմը:

18.Քանի՞ կգ է կշռում “ԶՀՆ-7” ձեռքի հակատանկային նռնականետը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

19.1914թ. առաջին համաշխարհային պատերազմում Կովկասյան ճակատը ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճ: Քանի՞ կիլոմետր էր այդ ճակատը:

20.1,5 մետր զույգ քայլի դեպքում, քանի՞ սմ կլինի մարդու միջին հասակը: